**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 21.02.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2020/13

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Ռուբիկ Հայրապետյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 08.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

# Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 12.1 կետը և պայմանագիր կնքելու որոշման հայտարարությամբ նշված 43-րդ չափաբաժնի մասով ընդունված որոշումները փոփոխել և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 09.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/02 համարի ծածկագիրը, իսկ 15.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/02 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/13 համարի ծածկագիրը և 17.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 17.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.02.2020թ.-ին:

## 2. <u>«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն 08.01.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*««ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 2 արձանագրության թիվ 1 հավելվածի համաձայն 43-րդ չափաբաժնի մասով ռենտգեն ժապավեն 35x43, մատակարարելու համար համապատասխան հայտեր են ներկայացրել «ԷսԶեթ Ֆարմա»*

*ՍՊԸ-ն 662.400 ՀՀ դրամ գնային առաջարկով առանց ՍԱՀ, «Դեզսերվիս» ՍՊԸ-ն 711.000 ՀՀ դրամ գնային առաջարկով առանց ԱԱՀ, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 765.000 ՀՀ դրամ գնային առաջարկով առանց ԱԱՀ և «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն 597.600 ՀՀ դրամ գնային առաջարկով ներառյալ ԱԱՀ-ն:*

*10.12.2019թ. ժամը 11:00-ին, «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում /Կոտայքի մարզ, Աբովյան, Հատիսի փողոց, 6 շենք/ տեղի ունեցած, գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 12.1-րդ կետի համաձայն 43-րդ չափաբաժնի մասով «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:*

*Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն Հանձնաժողովը հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը որոշել է 43-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչել «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին:*

*Գտնում ենք, որ Հանձնաժողովի 10.12.2019թ. ժամը 11:00-ին, Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 12.1-րդ կետով գնման առարկայի 43-րդ չափաբաժնի մասով ընդունված որոշումն անհիմն է և ենթակա է փոփոխման հետևյալ հիմնավորմամբ.*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների ն ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

*ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշման հավելված N 3 սահմանվել են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման*

*շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը, որի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Բժշկական նշանակության ապրանքները, ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10,3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին:*

*Ռենտգեն ժապավենները ընդգրկված են ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված N1 գնումների կազմակերպման կարգի 33-րդ կարգի 8 կետի համաձայն Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ ն տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:*

*Տվյալ դեպքում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն 43-րդ չափաբաժնի գնային առաջարկը ներկայացնելիս դրա մեջ ներառել է նաև ապրանքի ԱԱՀ-ն, մինչդեռ ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշմամբ վերոնշյալ ապրանքը ազատված է ԱԱՀ-ից, որը հայտը*

*մերժելու հիմք է հանդիսանում, ուստի հանձնաժողովը պետք է մերժեր, քանի որ կեղծ փվյալ է ներկայացրել հայտում, որով էլ առավելություն է ձեռք բերել մյուս մասնակցի նկատմամբ:»:*

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 12.1 կետը և պայմանագիր կնքելու որոշման հայտարարությամբ նշված 43-րդ չափաբաժնի մասով ընդունված որոշումները փոփոխել և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ին:

**3. <u>«Ռուբիկ Հայրապետյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 10.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ռուբիկ Հայրապետյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 09.01.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը հայտնել է հետրյալը.

*«Բժշկական նշանակության ապրանքների ձեռբերման նպատակով Պատվիրատուն կազմակերպել է «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգ: Ի թիվս այլ գնման առարկաների Ընթացակարգի շրջանակներում նախատեսվում է նաև ձեռքբերել «Ռենտգեն ժապավեն 35x43» (այսուհետ նաև՝ Գնման առարկա): Գնման առարկան ներառված է Ընթացակարգի 43-րդ չափաբաժնում:*

*Ընթացակարգի հայտերի բացման նիստը տերփ է ունեցել 2019 թավականի դեկտեմբերի 10-ի ժամը 11:00-ին: Գնման առակայի համար գնային առաջարկներ են ներկայացրել «էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, «Գեզսերվիս» ՍՊԸ-ն, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն և «ԱԻԳԱ ԹՐԵՅԳ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակիցներ): Մասնակիցները առաջարկել են գնման առարկայի մասով պայմանագիրը կատարել հետևյալ գներով.*

| Մասնակցի անվանումը | Գնային առաջարկը | | | |
|---|---|---|---|---|
| | **Ինքնարժեք** | **Շահույթ** | **ԱԱՀ** | **Ընդհանուր** |
| | **1** | **2** | **3** | **4=1+2+3** |
| ԱԻԴԱԹՐԵՅԴ ՍՊԸ | 456168 չորս հարյուր հիսունվեց հազար հարյուր վաթսունութ | 41832 քառասունմեկ հազար ութ հարյուր երեսուներկու | 99600 իննսունինը հազար վեց հարյուր դրամ | **597600 հինգ հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր** |
| էսզեթ Ֆարմա ՍՊԸ | 563040 հինգ հարյուր վաթսուներեք հազար քառասուն | 99360 իննսունինը հազար երեք հարյուր վաթսուն | | 662400 վեց հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր |
| Դեզսերվիս ՍՊԸ | 654813,23 վեց հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր տասներեք ամբողջ քսաներեք | 56186,77 հիսունվեց հազար հարյուր ութսունվեց ամբողջ յոթանասունյոթ | | 711000 յոթ հարյուր տասնմեկ հազար |
| Ֆարմեգուս ՍՊԸ | 612000 վեց հարյուր տասներկու հազար | 153000 հարյուր հիսուներեք հազար | | 765000 յոթ հարյուր վաթսունհինգ հազար |

*Հայտերի բացման նիստի վերաբերյալ կազմվել է Ընթացակարգի թիվ 2 արձանագրությունը: Եվ Գնման առարկայի մասով առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից է ճանաչվել «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, քանի որ վերջինս բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցն էր:*

*«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն.*

*«1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

*2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝*

*1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, (...)»:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն.*

*«2. Գնումների հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝*

*8) ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվելիք չափանիշները.»:*

*Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 և 8.4 կետեր համաձայն.*

*«5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով (...)»,*

*«8.4 Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, (...):»:*

*Ըստ վերը նշված նորմերի, գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատվում են բավարար, եթե դրանք ներկայացվել են գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան: Իսկ առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչվում է այն մասնակիցը, ով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից ներկայացրել է նվազագույն գնային առաջարկը: Ընդ որում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների գնահատումը և համեմատումը իրականացվում է առանց գնային առաջարկում նշված ավելացված արժեքի հարկի գումարի:*

*Այսպիսով, «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ, որը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պահանջներին: Հայտով «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն Գնման առարկայի համար ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը և այդ իսկ պատճառով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից: Ընդ որում «Միդա Թրեյդ» ՍՊԸ- ի Գնման առարկայի համար ներկայացրած գնային առաջարկը բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներից ամենացածրն էր՝ ինչպես առանց ԱԱՀ-ի, այնպես էլ ԱԱՀ-ն ներառյալ: Հետևաբար չի համապատասխանում իրականությանը Բողոքաբերի այն պնդումը, որ «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացնելով ԱԱՀ-ով գնային առաջարկ առավելություն է ձեռք բերել մյուս մասնակցի նկատմամբ:*

*«Գնումների մասին» Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: (...)»:*

*Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետի համաձայն. «5.2 (...) Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի*

*ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:»:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները (...) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:»:*

*ՀՀ Քաղաքացիական օրենսգքրի 8-րդ հոդվածի համաձայն. «Քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:»:*

*ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն. «1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:*

*2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.*

*12) (...) բժշկական նշանակության ապրանքների օտարումը, (...): Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.»:*

*ՀՀ հարկային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն. «1. Հարկային հաշիվներ դուրս չեն գրում՝*

*2) ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման այն գործարքների մասով, որոնք ազատված են ԱԱՀ-ից.»*

*ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «4. Օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ դուրս գրողը այդ հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը պետական բյուջե է վճարում մինչև այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:»*

*Վերը նշված նորմերից հետևում է, որ եթե մասնակիցը գնման գործընթացի արդյունքում կատարվելիք գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված*

*արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով մասնակիցը նախատեսում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*

*Չնայած նրան, որ Գնման առարկայի օտարումը ազատված է ավելացված արժեքի հարկից «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն գնային առաջարկում այդ գործարքի գծով նախատեսել է ավելացված արժեքի հարկ: Գնային առաջարկում ՄԱՀ նախատեսելը «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի մոտ առաջացրել է պարտավորություն, հետագայում Գնման առարկան մատակարարելու դեպքում պատվիրատուին դուրս գրել հարկային հաշիվ, որտեղ նաև պետք է առանձնացված փնի գնային առաջարկով նախատեսված ԱԱՀ-ն: Իսկ ինչպես հետևում է ՀՀ Հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներից նման հարկային հաշիվ դուրս գրելու դեքում «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի մոտ առաջանում է պարտավորություն՝ հարկային հաշվում նշված ԱԱՀ-ի գումարը վճարել պետական բյուջե:*

*Համադրելով վերը նշված իրավական նորմերը և վերլուծությունը կարող ենք գալ այն եզրահանգման, որ «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն Գնման առարկայի մատակարարման (օտարման) մասով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, այդ իսկ պատճառով Գնման առարկայի համար ներկայացրած գնային առաջարկում առանձին տողով ՍՍՀ-ի գումար նախատեսելը չի հակասում Ընթացակարգի հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:*

*Հետևաբար Բողոքաբերի այն պնդումը, որ «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրել է կեղծ տվյալ չի համապատասխանում իրականությանը:*

*Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ Պատվիրատուն ճանաչելով «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին Գնման առարկայի մասով առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից գործել է հիմնավոր և օրինական: Քանի որ «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է Ընթացակարգի հրավերի պայմաններին և Գնման առարկայի համար վերջինիս ներկայացրած գնային առաջարկը ամենացածրն է:»:*

**4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Ռուբիկ Հայրապետյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 03.12.2019թ.-ին հայտարարավել է «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով նույն ընթացակարգի 43-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով չորս ընկերություններ՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն, «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, «Դեզսերվիս» ՍՊԸ-ն և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 10.12.2019թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 43-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 43-րդ չափաբաժնով նախատեսվել էր ձեռքբերել՝ Ռենտգեն ժապավեն, զգայունությունը կանաչ, չափսը 35x43, որակյալ, համապատասխան փաթեթավորմամբ, փաթեթում առնվազն 100 հատ:

Գնման առարկա հանդիսացող 43-րդ չափաբաժնում ընդգրկված «ռենտգեն ժապավեն» ապրանք մատակարարելու համար «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | Շահույթ /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6=3+4+5* |
| **43** | Ռենտգեն ժապավեն 35x43 | 456 168 | 41 832 | 99 600 | 597 600 |

Ռենտգեն ժապավենները ընդգրկված են ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 2-րդ հավելվածում սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:

ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանվել են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության

ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը, որի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝ դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

««Ռուբիկ Հայրապետյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 03.12.2019թ.-ին հայտարարված «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած թվով չորս ընկերություններից «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 10.12.2019թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա 43-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել:

Ընթացակարգի հրավերի 43-րդ չափաբաժնով նախատեսվել էր ձեռքբերել՝ Ռենտգեն ժապավեն, զգայունությունը կանաչ, չափսը 35x43, որակյալ, համապատասխան փաթեթավորմամբ, փաթեթում առնվազն 100 հատ:

Գնման առարկա հանդիսացող 43-րդ չափաբաժնում ընդգրկված «ռենտգեն ժապավեն» ապրանք մատակարարելու համար «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկի 5-րդ սյունյակում նշել է ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը:

Ռենտգեն ժապավենները ընդգրկված են ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ գնային առաջարկի 5-րդ սյունակում ԱԱՀ-ն ենթակա չէր նշման, քանի որ գնման առարկայի 43-րդ չափաբաժնում ընդգրկված

«ռենտգեն ժապավեն» ապրանքը ընդգրկված է ԵՏՄ ԱՏԳԱ դասակարգչի 3701 10 ծածկագրի ներքո՝ դրանով իսկ, ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1317-Ն որոշման հիմքով, ազատված է ԱԱՀ-ից:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատաս-խանություններն ենթակա են շտկման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարաման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/13 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովին՝

դադարեցնել 10.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 12.1 կետը և պայմանագիր կնքելու որոշման հայտարարությամբ նշված 43-րդ չափաբաժնի մասով ընդունված որոշումները:

ընդունել որոշում՝ ընթացակարգի 43-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷսԶեթ Ֆարմա» ՍՊԸ-ին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**